# ԹԵՄԱ 1



# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍ 1.4 **Քարտեզագրական, դաշտային արշավախմբային մեթոդներ**

*Նավը Պարսից ծոցից դուրս գալուց հետո պետք է հատեր հասարակածը, ապա անցներ Մոզամբիկի նեղուցով, շրջանցեր Ասեղի հրվանդանը, Աֆրիկայի արևմտյան ծովեզերքի երկայնքով նավարկելով հասներ Կանարյան կղզիներ, որտեղից էլ՝ Միլֆորդ: Միլֆորդը Քոռնուել թերակղզու վրա է, որի արևմտյան ծայրի մոտ էլ Սալլի կղզիներն են: Կանարյան կղզիներից մինչև Միլֆորդ ղեկապետերն այնպես հաշվարկեցին, որ ճանապարհը լիներ միանգամայն ուղիղ, և նավը պետք է շարժվեր միևնույն ուղղությամբ՝ 18 ատիճանով: Ուղևորության 1:300000, 1:200000 և 1:100000 մասշտաբի քարտեզների վրա ղեկապետերը նշեցին ընթացքի ուղղությունը, շրջադարձի անկյունները, կողմնացույցի ցուցանիշները: Այդպես են վարվում ղեկապետերը աշխարհի բոլոր երկրներում, օդաչուները՝ թռիչքի պատրաստվելիս: Ուղևորության քարտեզները մանրամասն քարտեզներ են, որոնց վրա մատնանշված են օվկիանոսի հատակի խորությունները, ափագիծը, փարոսները, գետաբերանները, նավահանգիստները, նավամատույցները:*

*... Մարտի 18-ին ժամը 8.50-ին նավից եթեր արձակվեց աղետի SOS ազդանշանը:*